

Նոր խմբագրությամբ գրանցված է

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկում

Նախագահ՝ Արթուր Ջավադյան

« 29 » մարտ 2010թ.

**ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՍՍԵՐԻ
ՔԼԻՐԻՆԳԻ ԵՎ ՎԵՐՁՆԱՀԱՇՎԱՐԿԻ
ԿԱՆՈՆՆԵՐ**

Գլուխ 1. Հասկացություններ

- 1) Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն սույն գլխով սահմանված նշանակությունները:
- 2) **«Շուկա»**. օրենքով և Օպերատորի կանոններով սահմանված կարգով պետական պարտատոմսերի հրապարակային առևտուր կազմակերպելու նպատակով Օպերատորի կողմից կազմակերպված՝ պետական պարտատոմսերի շուկա:
- 3) **«Առաքում վճարման դիմաց»**. Առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքների վերջնահաշվարկի իրականացման սկզբունք, որի դեպքում Շուկայի մասնակցի (նրա ամփոփ հաճախորդների) գուտ պահանջները կարող են բավարարվել միայն Շուկայի տվյալ մասնակցի (նրա ամփոփ հաճախորդների) գուտ պարտավորությունների կատարման դեպքում՝ գուտ պահանջ ունեցող Շուկայի մասնակիցների (նրանց ամփոփ հաճախորդների) հաշիվներին Օպերատորի առևտրային հաշիվներից համապատասխան արժեթղթերի և/կամ դրամային միջոցների միաժամանակյա փոխանցմամբ:
- 4) **«Օպերատորի դեպո առևտրային հաշիվ»**. Հաշվարկային բանկում Օպերատորի անունով բացված հաշիվ, որը նախատեսված է տվյալ առևտրային օրվա առևտրային նստաշրջանի (նստաշրջանների) ընթացքում Շուկայի մասնակիցների կողմից իրենց և իրենց ամփոփ հաճախորդների հաշիվն գործարքներ կնքելու համար նախատեսված պետական պարտատոմսերի փոխանցման, հաշվառման և քլիրինգի արդյունքների հիման վրա Շուկայի մասնակիցների և նրանց ամփոփ հաճախորդների՝ պետական պարտատոմսերի առաքման գծով պարտավորությունների կատարման ապահովման համար:
- 5) **«Օպերատորի դրամային առևտրային հաշիվ»**. Հաշվարկային բանկում Օպերատորի անունով բացված հաշիվ, որը նախատեսված է տվյալ առևտրային օրվա առևտրային նստաշրջանի (նստաշրջանների) ընթացքում Շուկայի մասնակիցների կողմից իրենց և իրենց ամփոփ հաճախորդների հաշիվն գործարքներ կնքելու համար նախատեսված ՀՀ դրամով արտահայտված (դրամային) միջոցների փոխանցման, հաշվառման և քլիրինգի արդյունքների հիման վրա Շուկայի մասնակիցների և նրանց ամփոփ հաճախորդների դրամային պարտավորությունների կատարման ապահովման համար:
- 6) **«Իրավասու հաշիվներ»**. Շուկայի մասնակիցներին պատկանող դեպո (դրամային) հաշիվներ, որոնցից միայն կարող է իրականացվել պետական պարտատոմսերի (դրամային միջոցների) նախնական դեպոնացումը, առևտրային նստաշրջանի ընթացքում դրանց լրացուցիչ դեպոնացումը և որոնց վրա կարող են փոխանցվել պետական պարտատոմսերը (դրամային միջոցները) ապադեպոնացման, ինչպես նաև Շուկայում կնքված գործարքների վերջնահաշվարկի ժամանակ:
- 7) **«Հաճախորդ»**. ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ներդրումային ծառայությունների գործող պայմանագիր ունի պետական պարտատոմսերի շուկայի մասնակցի հետ:
- 8) **«Հաշվարկային բանկ»**. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:
- 9) **«Հաշվարկային գործակալ»**. առևտրային բանկ (պետական պարտատոմսերի ենթապահառու), որի միջոցով իրականացվում են Հաշվարկային բանկում դրամային (դեպո) իրավասու հաշիվներ չունեցող Շուկայի մասնակիցների՝ Շուկայում առևտրին մասնակցության հետ կապված դրամային (պետական պարտատոմսերի) փոխանցումներն իրենց միջև կնքված պայմանագրերին համապատասխան:
- 10) **«Հանձնարարական»**. դրամային միջոցների վճարման հանձնարարական կամ պետական պարտատոմսերի փոխանցման դեպո հանձնարարական:
- 11) **«Օպերատոր»**. «ՆԱՄԴԱԶ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց Բաժնետիրական Ընկերություն:
- 12) **«Քլիրինգ»**. Շուկայում կնքված գործարքների արդյունքում ծագած՝ փոխադարձ պարտավորությունների որոշում և հաշվանցում (գործարքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, խմբավորում, ինչպես նաև վերջնահաշվարկի համար Շուկայի մասնակիցների դիրքերի հաշվարկում և վճարահաշվարկային փաստաթղթերի պատրաստում):
- 13) **«Կենտրոնացված-անընդհատ քլիրինգ»**. քլիրինգի իրականացման եղանակ, որի դեպքում միևնույն առևտրային օրվա մեկ կամ ավելի առևտրային նստաշրջանների ընթացքում կնքված յուրաքանչյուր գործարքից հետո Օպերատորը որոշում է Շուկայի մասնակիցների և նրանց ամփոփ հաճախորդների գուտ պարտավորությունները և/կամ պահանջները և

- դառնում է կնքված գործարքների հակադարձ կողմը՝ ստանձնելով Շուկայի մասնակիցների բոլոր պարտականությունները և ձեռք բերելով նրանց բոլոր իրավունքները կապված առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքների կատարման հետ:
- 14) **«Ձուտացում».** միևնույն առևտրային օրվա մեկ կամ ավելի առևտրային նստաշրջանների ընթացքում կնքված գործարքներից բխող պահանջների և պարտավորությունների հաշվանցման հետ կապված Շուկայի մասնակցի և նրա ամփոփ հաճախորդների զուտ պարտավորությունների և/կամ պահանջների որոշման գործընթաց, որի արդյունքում Շուկայի յուրաքանչյուր մասնակցի (նրա ամփոփ հաճախորդների) մոտ Օպերատորի հանդեպ կարող է առաջանալ միայն՝
- ա) մեկ զուտ դրամային պահանջ կամ զուտ դրամային պարտավորություն, և/կամ
 - բ) պետական պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման (տրանշի) գծով մեկ զուտ արժեթղթային պահանջ կամ զուտ արժեթղթային պարտավորություն:
- 15) **«Վերջնահաշվարկ».** գործողություն, որի արդյունքում մարվում են դրամային միջոցների և պետական պարտատոմսերի փոխանցման հետ կապված Շուկայի մասնակիցների (նրանց ամփոփ հաճախորդների) և Օպերատորի՝ զուտացման արդյունքում ծագած դրամային և արժեթղթային պարտավորությունները:
- 16) Մույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և Օպերատորի առևտրի կանոններով սահմանված նշանակությունները:

Գլուխ 2. Քիրինգի և վերջնահաշվարկի իրականացման եղանակները, կիրառվող հաշիվները

- 1) Շուկայում կնքված գործարքների արդյունքում ծագած փոխադարձ պարտավորությունները Օպերատորը որոշում և հաշվանցում է զուտացման միջոցով՝ կենտրոնացված-անընդհատ քիրինգի եղանակով:
- 2) Հաշվարկային բանկում դրամային և դեպո հաշիվներ ունեցող Շուկայի մասնակիցների կողմից Շուկայում կնքված գործարքների վերջնահաշվարկն իրականացնում է Հաշվարկային բանկը առաքում վճարման դիմաց սկզբունքով T+0 ժամանակահատվածում, որտեղ T-ն գործարքի կնքման ամսաթիվն է, իսկ 0-ն՝ գործարքի կնքման օրվան հաջորդող աշխատանքային օրերի թիվը: Հաշվարկային գործակալի մոտ դրամային և դեպո հաշիվներ ունեցող Շուկայի մասնակիցների կողմից Շուկայում կնքված գործարքների վերջնահաշվարկն իրականացնում է Հաշվարկային գործակալը:
- 3) Պետական պարտատոմսերի և դրամային միջոցների նախնական դեպոնացումը, առևտրային նստաշրջանի ընթացքում դրանց լրացուցիչ դեպոնացումը, ապադեպոնացումը, ինչպես նաև Շուկայում կնքված գործարքների վերջնահաշվարկն իրականացվում է միայն Շուկայի մասնակիցների իրավասու հաշիվներով: Իրավասու հաշիվներ կարող են լինել Հաշվարկային բանկում կամ Հաշվարկային գործակալի մոտ վարվող ամփոփ հաճախորդների և սեփական դեպո և դրամային հաշիվները, ընդ որում՝ իրավասու հաշիվը համարվում է Հաշվարկային բանկում վարվող, եթե՝
- ա) տվյալ իրավասու հաշիվը փաստացի վարվում է Հաշվարկային բանկում, կամ
 - բ) տվյալ իրավասու հաշիվը Հաշվարկային բանկում փաստացի վարվող հաշվի արտացոլումն է Շուկայի մասնակցի ներքին հաշվառման համակարգում:
- 4) Շուկայի մասնակիցները պարտավոր են Օպերատորին ներկայացնել տեղեկություններ սույն գլխի 3) կետում նշված իրենց իրավասու հաշիվների մասին: Շուկայի մասնակիցները կարող են ունենալ սեփական և ամփոփ հաճախորդների մեկական դրամային և դեպո իրավասու հաշիվներ, որոնք կարող են փոփոխվել այդ մասին Օպերատորին առնվազն մեկ օր առաջ գրավոր տեղեկացնելով: Շուկայի մասնակցի կողմից թղթային եղանակով Հաշվարկային բանկ դրամային միջոցների փոխանցման Հանձնարարականների ներկայացման դեպքում Օպերատորի կողմից որպես իրավասու հաշիվ է դիտվում Հաշվարկային բանկում փաստացի վարվող՝ Շուկայի տվյալ մասնակցի հաշիվը, որի դեպքում փոխանցված միջոցները սույն կանոններով սահմանված կարգով օգտագործվում են առևտրային համակարգում Շուկայի տվյալ մասնակցի սեփական միջոցները համալրելու նպատակով:
- 5) Եթե Շուկայի մասնակցի որևէ իրավասու հաշիվը վարվում է Հաշվարկային գործակալի մոտ, ապա Շուկայի տվյալ մասնակիցը պարտավոր է իրավասու հաշվի (հաշվի փոփոխության) մասին Օպերատորին տեղեկացման հետ միաժամանակ Օպերատորին ներկայացնել նաև իրեն սպասարկող Հաշվարկային գործակալի գրավոր համաձայնությունը (երկու բնօրինակ)

սույն կանոնների 7-րդ գլխի 10) և 11) կետերում նշված դեպքում և չափով տվյալ Հաշվարկային գործակալի՝ Հաշվարկային բանկում վարվող թղթակցային դրամային և/կամ դեպո հաշվից համապատասխան միջոցների գանձման իրավունքը Օպերատորին վերապահելու մասին՝ նշելով համապատասխան հաշվեհամարները, որի մեկ օրինակը Օպերատորը ներկայացնում է Հաշվարկային բանկին:

- 6) Եթե Շուկայի մասնակցի որևէ իրավասու հաշիվը վարվում է Հաշվարկային բանկում, ապա Շուկայի մասնակիցը պարտավոր է տվյալ իրավասու հաշվի (հաշվի փոփոխության) մասին Օպերատորին տեղեկացման հետ միաժամանակ Օպերատորին ներկայացնել նաև իր գրավոր համաձայնությունը (երկու բնօրինակ) սույն կանոնների 7-րդ գլխի 10) և 11) կետերում նշված դեպքում և չափով՝ Հաշվարկային բանկում վարվող իր դրամային և դեպո հաշիվներից համապատասխան միջոցների գանձման իրավունքը Օպերատորին վերապահելու մասին՝ նշելով համապատասխան հաշվեհամարները, որի մեկ օրինակը Օպերատորը ներկայացնում է Հաշվարկային բանկին:

Գլուխ 3. Պետական պարտատոմսերի և դրամային միջոցների նախնական դեպոնացումը

- 1) Շուկայում կնքվող գործարքների վերջնահաշվարկի կատարման ապահովման նպատակով Շուկայի մասնակիցները մինչև առևտրային նստաշրջանի սկիզբը իրենց իրավասու դրամային (դեպո) հաշիվներից Օպերատորի դրամային (դեպո) առևտրային հաշիվներին են փոխանցում (դեպոնացնում) առևտրի համար նախատեսված պետական պարտատոմսերը և դրամային միջոցները:
- 2) Պետական պարտատոմսերի և դրամային միջոցների փոխանցումը Օպերատորի դեպո և դրամային առևտրային հաշիվների վրա իրականացվում է Հաշվարկային բանկ ներկայացված համապատասխան Հանձնարարականների հիման վրա: Հանձնարարականները ներկայացվում են էլեկտրոնային եղանակով, իսկ էլեկտրոնային եղանակով ներկայացման անհնարինության դեպքում՝ թղթային եղանակով: Էլեկտրոնային եղանակով վճարման հանձնարարականները ներկայացվում են «ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի» ՀՏ 202 կամ ՀՏ 100 հաղորդագրության միջոցով, իսկ դեպո հանձնարարականները՝ «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկների էլեկտրոնային համակարգի» ՀՏ 522 հաղորդագրության միջոցով: Ընդ որում, եթե ՀՏ 202 վճարման հանձնարարականում 21-րդ դաշտը («Գործառնության հղման համար») լրացված է, ապա պարտադիր է նաև դրան համապատասխանող ՀՏ 969 Ռեեստրի առկայությունը, որն ուղարկվում է անմիջապես Օպերատորին: Հաշվարկային բանկում հաշիվներ չունեցող Շուկայի մասնակիցները համապատասխան Հանձնարարականները ներկայացնում են իրենց Հաշվարկային գործակալին, որն իր հերթին դրանք ներկայացնում է Հաշվարկային բանկ՝ համապատասխան միջոցները Օպերատորի առևտրային հաշիվներին փոխանցելու նպատակով: Հաշվարկային գործակալին Հանձնարարականների ներկայացման կարգը և ժամկետները սահմանվում են Հաշվարկային գործակալի և Շուկայի մասնակցի միջև կնքված պայմանագրով:
- 3) Էլեկտրոնային Հանձնարարականները պետք է Հաշվարկային բանկ ներկայացվեն առևտրային նստաշրջանի սկսվելուց առնվազն 45 (քառասունհինգ) րոպե առաջ, որոնց կատարման դեպքում կատարումը հաստատող համապատասխան ՀՏ 202, ՀՏ 100 կամ ՀՏ 522 հաղորդագրություններն էլեկտրոնային եղանակով անմիջապես ուղարկվում են Օպերատորին: Դրանից հետո Հաշվարկային բանկ ներկայացված էլեկտրոնային Հանձնարարականների կատարումը մինչև սույն գլխի 5) կետում նշված ժամկետը Հաշվարկային բանկը չի երաշխավորում: Եթե Բորսայի կողմից ստացված՝ ՀՏ 202 հանձնարարականի կատարումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրության 21-րդ դաշտը («Գործառնության հղման համար») լրացված է, ապա դրան համապատասխանող ՀՏ 969 Ռեեստրը պետք է Օպերատորին ներկայացվի առևտրային նստաշրջանի սկսվելուց առնվազն 15 (տասնհինգ) րոպե առաջ:
- 4) Թղթային Հանձնարարականները պետք է Հաշվարկային բանկ ներկայացվեն առևտրային նստաշրջանի սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ, որոնց կատարման դեպքում կատարումը հաստատող համապատասխան ՀՏ 202, ՀՏ 100 կամ ՀՏ 522 հաղորդագրություններն ավտոմատ եղանակով անմիջապես ուղարկվում են Օպերատորին: Դրանից հետո

- Հաշվարկային բանկ ներկայացված թղթային Հանձնարարականների կատարումը մինչև սույն գլխի 5) կետում նշված ժամկետը Հաշվարկային բանկը չի երաշխավորում:
- 5) Հաշվարկային բանկը պետք է ապահովի Հանձնարարականների կատարումը հաստատող հաղորդագրությունների ներկայացումը Օպերատորին առևտրային նստաշրջանի սկսվելուց առնվազն 15 (տասնհինգ) րոպե առաջ:
 - 6) Հաշվարկային բանկ Հանձնարարականի ներկայացման պահ է համարվում՝
 - ա) թղթային եղանակով ներկայացված Հանձնարարականի դեպքում՝ Հաշվարկային բանկի լիազորված աշխատակցին Հանձնարարականի հանձնման պահը,
 - բ) էլեկտրոնային եղանակով ներկայացված Հանձնարարականի դեպքում՝ «ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի» կամ «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկների էլեկտրոնային համակարգի» կողմից առաքումը հաստատող դրական անդորրագրի ձևակերպման ժամանակը:
 - 7) Օպերատորին Հանձնարարականների կատարումը հաստատող հաղորդագրությունների և էլեկտրոնային հանձնարարականների Ռեեստրների ներկայացման պահ է համարվում «ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի» կամ «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկների էլեկտրոնային համակարգի» կողմից առաքումը հաստատող դրական անդորրագրի ձևակերպման ժամանակը:
 - 8) Եթե Հաշվարկային բանկում տեխնիկական վթարի հետևանքով անհնար է ապահովել էլեկտրոնային եղանակով ներկայացվող Հանձնարարականների ընդունումը մինչև սույն գլխի 3) կետում սահմանված ժամը, ապա Հաշվարկային բանկը, ոչ ուշ քան առևտրային նստաշրջանի սկսվելուց 30 (երեսուն) րոպե առաջ այդ մասին հեռախոսով և ՍիԲիԷյՆԵթ համակարգչային ցանցով տեղեկացնում է Օպերատորին: Օպերատորը «Առևտրի ընդհանուր կանոններին» համապատասխան որոշում է ընդունում առևտրային նստաշրջանի սկիզբը հետաձգելու վերաբերյալ և ՍիԲիԷյՆԵթ համակարգչային ցանցով կամ հեռախոսով տեղեկացնում է այդ մասին Շուկայի մասնակիցներին: Շուկայի այն մասնակիցները, որոնց էլեկտրոնային Հանձնարարականները չեն ստացվել Հաշվարկային բանկի կողմից, կարող են Հաշվարկային բանկ ներկայացնել թղթային Հանձնարարականներ՝ նշելով վերջիններիս վրա «կրկնօրինակ», ինչը կբացառի միջոցների կրկնակի փոխանցումը Օպերատորի առևտրային հաշիվներին:
 - 9) Եթե տեխնիկական վթարի հետևանքով անհնար է Հանձնարարականների կատարումը հաստատող հաղորդագրությունների և էլեկտրոնային հանձնարարականների Ռեեստրների էլեկտրոնային եղանակով ստացումը Օպերատորի կողմից, ապա դրանք Օպերատորը Հաշվարկային բանկից ստանում է էլեկտրոնային կրիչով և, անհրաժեշտության դեպքում, որոշում է ընդունում առևտրային նստաշրջանի սկիզբը հետաձգելու վերաբերյալ:
 - 10) Եթե Շուկայում առկա տեխնիկական խնդիրների կամ այլ պատճառների հետևանքով որոշում է ընդունվում առևտրային նստաշրջանի սկիզբը հետաձգելու վերաբերյալ, ապա Օպերատորը այդ մասին հեռախոսով և ՍիԲիԷյՆԵթ համակարգչային ցանցով ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնում է Շուկայի մասնակիցներին և Հաշվարկային բանկին:
 - 11) Սույն գլխի 8), 9) և 10) կետերով սահմանված դեպքերում առևտրային նստաշրջանի սկզբի հետաձգման ժամկետով հետաձգվում է նաև սույն գլխի 3), 4) և 5) կետերում սահմանված՝ Հանձնարարականների և Հանձնարարականների կատարումը հաստատող հաղորդագրությունների ներկայացման ժամկետները:
 - 12) Հաշվարկային բանկից առևտրային նստաշրջանի սկսվելուց առնվազն 15 (տասնհինգ) րոպե առաջ ստացված՝ Հանձնարարականների կատարումը հաստատող համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների հիման վրա Օպերատորի առևտրային համակարգում առևտրային նստաշրջանի բացման դրությամբ Օպերատորը ձևավորում է Շուկայի մասնակիցների պետական պարտատոմսերի և դրամային միջոցների սկզբնական մնացորդները: Եթե Օպերատորի կողմից ստացված՝ ՀՏ 202 Հանձնարարականի կատարումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրության 21-րդ դաշտը («Գործառնության հղման համար») լրացված է, ապա դրամային միջոցների սկզբնական մնացորդների ձևավորման կամ դրամային միջոցների մնացորդների ավելացման համար համապատասխանաբար սույն կետով կամ սույն կանոնների 4-րդ գլխի 2) կետով սահմանված ժամկետում Օպերատորը պետք է ստացած լինի նաև տվյալ ՀՏ 202 Հանձնարարականին համապատասխանող ՀՏ 969 Ռեեստրը: Սույն կետով սահմանված ժամկետից հետո, բայց ոչ ուշ, քան մինչև սույն կանոնների 4-րդ գլխի 2) կետով սահմանված ժամկետը ստացված՝ Հանձնարարականների կատարումը հաստատող էլեկտրոնային

հաղորդագրությունները և դրանց համապատասխանող Ռեեստրները հաշվի չեն առնվում միջոցների սկզբնական մնացորդների ձևավորման ժամանակ, սակայն հաշվի առնվում են սույն կանոնների 4-րդ գլխին համապատասխան Օպերատորի առևտրային համակարգում Շուկայի մասնակիցների պետական պարտատոմսերի և դրամային միջոցների մնացորդների ավելացման ժամանակ:

- 13) Եթե Օպերատորի դեպո (դրամային) առևտրային հաշիվներին միջոցներ են փոխանցվել ոչ իրավասու հաշիվներից կամ սույն գլխով չսահմանված Հանձնարարականների միջոցով, ապա Օպերատորը նույն առևտրային օրվա ընթացքում պատրաստում և Հաշվարկային բանկ է ներկայացնում համապատասխան էլեկտրոնային Հանձնարարականներ ստացված միջոցները նույն հաշիվներին հետ փոխանցելու նպատակով:

Գլուխ 4. Առևտրային նստաշրջանի ընթացքում միջոցների լրացուցիչ դեպոնացումը և ապադեպոնացումը

- 1) Շուկայի մասնակիցները կարող են կատարել պետական պարտատոմսերի և/կամ դրամային միջոցների լրացուցիչ դեպոնացումներ՝ սույն կանոնների 3-րդ գլխով սահմանված ընթացակարգերին համապատասխան Օպերատորի դեպո (դրամային) առևտրային հաշիվներին փոխանցելով համապատասխան պետական պարտատոմսեր (դրամային միջոցներ):
- 2) Օպերատորի առևտրային հաշիվներին լրացուցիչ դեպոնացված միջոցների վերաբերյալ Հաշվարկային բանկից ստացված՝ Հանձնարարականների կատարումը հաստատող համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունները հիմք են առևտրային համակարգում Շուկայի մասնակիցների՝ պետական պարտատոմսերի և դրամային միջոցների մնացորդների ավելացման համար: Հաշվարկային բանկից մինչև ժամը 12:50-ը ստացված հաստատումների հիման վրա առևտրային համակարգում Օպերատորը ժամը 13:00-ին ավելացնում է Շուկայի մասնակիցների՝ պետական պարտատոմսերի և դրամային միջոցների մնացորդները:
- 3) Հաշվարկային բանկը մերժում է ժամը 14:30-ից հետո Շուկայի մասնակիցների կողմից ներկայացված՝ դրամական միջոցների վճարման հանձնարարականները:
- 4) Եթե Շուկայի մասնակիցների կողմից լրացուցիչ դեպոնացման համար Օպերատորի դեպո (դրամային) առևտրային հաշիվներին փոխանցվել են պետական պարտատոմսեր (դրամային միջոցներ), որոնց համապատասխան Հանձնարարականների կատարումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրությունները կամ վերջիններիս համապատասխանող Ռեեստրները Օպերատորը ստացել է ժամը 12:50-ից հետո մինչև ժամը 14:45-ը, ապա Օպերատորը անմիջապես պատրաստում և Հաշվարկային բանկ է ներկայացնում համապատասխան էլեկտրոնային Հանձնարարականներ ստացված միջոցները նույն հաշիվներին հետ փոխանցելու նպատակով: Սույն կետում նշված հաղորդագրությունները և/կամ դրանց համապատասխանող Ռեեստրները ժամը 14:45-ից հետո ստանալու դեպքում Օպերատորը Հաշվարկային բանկ է ներկայացնում համապատասխան էլեկտրոնային Հանձնարարականներ ստացված միջոցները նույն հաշիվներին հետ փոխանցելու նպատակով մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 10:00-ը: Օպերատորը որևէ գործողություն չի ձեռնարկում, եթե ստացել է միայն Ռեեստրը՝ առանց Հանձնարարականի կատարումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրության:
- 5) Եթե Օպերատորի դեպո (դրամային) առևտրային հաշիվներին լրացուցիչ դեպոնացման համար սահմանված ժամանակահատվածում միջոցներ են փոխանցվել ոչ իրավասու հաշիվներից կամ սույն կանոններով չսահմանված Հանձնարարականների միջոցով, ապա Օպերատորը նույն առևտրային օրվա ընթացքում պատրաստում և Հաշվարկային բանկ է ներկայացնում համապատասխան էլեկտրոնային Հանձնարարականներ ստացված միջոցները նույն հաշիվներին հետ փոխանցելու նպատակով:
- 6) Օպերատորը առևտրային նստաշրջանի ընթացքում ժամը 11:30-ին, 12:30-ին և 14:00-ին ստուգում է Օպերատորի «Պետական պարտատոմսերի առևտրի կանոններին» համապատասխան առևտրի որևէ մասնակցի կողմից առևտրային համակարգում Շուկայի տվյալ մասնակցի առկա միջոցների (դրանց մի մասի) ապադեպոնացում կատարելու փաստը:
- 7) Ստուգման արդյունքում եթե պարզվում է, որ առևտրի որևէ մասնակցի կողմից ստուգմանը նախորդող ժամանակահատվածի (11:00-ից 11:30-ը, 11:30-ից 12:30-ը, 12:30-ից 14:00-ը)

ընթացքում կատարվել է միջոցների ապադեպոնացում, ապա Օպերատորը 15 (տասնհինգ) թույլի ընթացքում պատրաստում և իր տարածքում գտնվող տերմինալից ուղարկում է էլեկտրոնային Հանձնարարական(ներ)՝ Օպերատորի դեպո և/կամ դրամային առևտրային հաշիվներից Շուկայի համապատասխան մասնակցի(ների) իրավասու հաշիվներին համապատասխան պետական պարտատոմսերի և/կամ դրամային միջոցների փոխանցման նպատակով: Օպերատորի տարածքում գտնվող տերմինալից էլեկտրոնային եղանակով Հանձնարարականների ներկայացման անհնարինության դեպքում դրանք 45 թույլի ընթացքում էլեկտրոնային եղանակով ներկայացվում են Հաշվարկային բանկում Օպերատորին հատկացված պահուստային տերմինալից՝ այդ մասին ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով, հեռախոսով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնելով Շուկայի մասնակիցներին: Պահուստային տերմինալից էլեկտրոնային եղանակով Հանձնարարականները ներկայացնելու անհնարինության դեպքում դրանք ներկայացվում են թղթային եղանակով՝ այդ մասին ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով, հեռախոսով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնելով Շուկայի մասնակիցներին և Հաշվարկային բանկին: Առևտրի մասնակիցների կողմից ժամը 14:00-ից հետո ապադեպոնացված սեփական դրամային միջոցները Օպերատորի «Վարկային ռեսուրսների քլիրինգի և վերջնահաշվարկի կանոններին» համապատասխան ուղղվում են Օպերատորի կողմից կազմակերպվող վարկային ռեսուրսների շուկա՝ որպես Շուկայի տվյալ մասնակցի վարկային ռեսուրս, եթե Շուկայի տվյալ մասնակիցը վարկային ռեսուրսների շուկային մասնակցելու թույլտվություն ունի: Առևտրի մասնակիցների կողմից ժամը 14:00-ից հետո կատարված՝ միջոցների մնացած բոլոր ապադեպոնացումները բացի առևտրային համակարգում դրանց մնացորդների նվազեցումից որևէ այլ հետևանք չեն առաջացնում, իսկ ապադեպոնացված համապատասխան միջոցները Շուկայի համապատասխան մասնակցի(ների) իրավասու հաշիվներին փոխանցվում են ընդհանուր կարգով՝ վերջնահաշվարկի իրականացման ժամանակ:

- 8) Հաշվարկային բանկում սույն գլխի 4) և 7) կետերով սահմանված Հանձնարարականները կատարվում են, որի արդյունքում ապահովվում է դրանցում նշված միջոցների փոխանցումը Հաշվարկային բանկում վարվող՝ Շուկայի համապատասխան մասնակցի(ների) իրավասու հաշիվներին: Հաշվարկային գործակալի մոտ վարվող իրավասու հաշիվներին կատարվելիք փոխանցումների դեպքում Հաշվարկային բանկն ապահովում է Հանձնարարականում նշված միջոցների փոխանցումը Հաշվարկային գործակալի՝ Հաշվարկային բանկում վարվող թղթակցային դրամային կամ ամփոփ ներդրողների դեպո հաշվին՝ միաժամանակ Հաշվարկային գործակալին փոխանցելով Հանձնարարականի կատարումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրությունը: Հաշվարկային գործակալները Հաշվարկային բանկից ստացված հաստատումների հիման վրա ապահովում են միջոցների մուտքագրումն իրենց մոտ վարվող՝ Շուկայի մասնակիցների իրավասու հաշիվներին: Միջոցների մուտքագրման ժամկետները և Շուկայի մասնակիցներին տեղեկացման կարգը սահմանվում են Հաշվարկային գործակալի և Շուկայի մասնակցի միջև կնքված պայմանագրով:

Գլուխ 5. Քլիրինգ

- 1) Հետառևտրային նստաշրջանի ավարտից հետո Օպերատորը հավաքագրում և խմբավորում է առևտրի մասնակիցների կողմից կնքված գործարքների, առևտրային նստաշրջանի ընթացքում լրացուցիչ դեպոնացված միջոցների, կատարված ապադեպոնացումների վերաբերյալ տվյալները, Օպերատորի «Պետական պարտատոմսերի առևտրի կանոններով» սահմանված կարգով և ժամկետներում Շուկայի մասնակիցներին ուղարկում կամ վերջիններիս լիազորված ներկայացուցիչներին տրամադրում է գործարքների գրանցման վկայականները և հաշվարկում է Շուկայի մասնակիցների դիրքերը՝ դրամային և արժեթղթային գուտ պահանջները և պարտավորությունները:
- 2) Շուկայի մասնակիցների դիրքերը հաշվարկելու նպատակով Օպերատորն իրականացնում է առևտրային և հետառևտրային նստաշրջանների ընթացքում կնքված գործարքներից բխող պահանջների և պարտավորությունների գուտացում, որի արդյունքում ըստ Շուկայի յուրաքանչյուր մասնակցի և նրա ամփոփ հաճախողների Օպերատորը որոշում է՝
 - ա) մեկ գուտ դրամային պահանջ կամ գուտ դրամային պարտավորություն, և/կամ
 - բ) պետական պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման (տրանշի) գծով մեկ գուտ արժեթղթային պահանջ կամ գուտ արժեթղթային պարտավորություն:

- 3) Դրամային կամ արժեթղթային գուտ պարտավորությունը ցույց է տալիս, թե Շուկայի մասնակիցը կամ նրա հաճախորդները դրամային միջոցների ինչ գումար կամ տվյալ թողարկման (տրանշի) որքան պետական պարտատոմսեր պետք է փոխանցեն, իսկ գուտ պահանջը՝ թե դրամային միջոցների ինչ գումար կամ տվյալ թողարկման (տրանշի) որքան պետական պարտատոմսեր պետք է ստանան:
- 4) Եթե Շուկայի մասնակիցը Օպերատորի կանոններին համապատասխան միաժամանակ մասնակցում է պետական պարտատոմսերի և Օպերատորի կողմից նախնական դեպոնացմամբ կազմակերպվող արտարժույթի առևտրին, ապա սույն գլխի 2) կետով սահմանված կարգով գուտ դրամային պահանջները և պարտավորությունները որոշելիս Օպերատորը համախմբում է Շուկայի տվյալ մասնակցի կողմից պետական պարտատոմսերի և նախնական դեպոնացմամբ կազմակերպվող արտարժույթի առևտրի ընթացքում կնքված գործարքների մասին տվյալները:

Գլուխ 6. Միջոցների համեմատումը և վճարահաշվարկային փաստաթղթերի պատրաստումը

- 1) Շուկայի յուրաքանչյուր մասնակցի և նրա ամփոփ հաճախորդների դրամային միջոցների և/կամ պետական պարտատոմսերի գծով գուտ պահանջները և պարտավորությունները որոշելուց հետո Օպերատորը Շուկայի մասնակիցների և նրանց ամփոփ հաճախորդների գուտ պարտավորությունների կատարումը ստուգելու նպատակով համեմատում է իր հաշիվներին փոխանցված միջոցները Շուկայում կնքված գործարքների արդյունքում Շուկայի մասնակիցների և նրանց ամփոփ հաճախորդների կողմից ստանձնած գուտ պարտավորությունների հետ:
- 2) Շուկայի մասնակիցների (նրանց ամփոփ հաճախորդների) դրամային (արժեթղթային) գուտ պարտավորությունները համարվում են կատարված, եթե Օպերատորի դրամային (դեպո) առևտրային հաշիվներին նախնական և լրացուցիչ դեպոնացման ժամանակ փոխանցված միջոցների և սպառեպոնացված միջոցների տարբերությունը բավարար է կենտրոնացված-անընդհատ քլիրինգի պայմաններում Շուկայի տվյալ մասնակցի (նրա ամփոփ հաճախորդների) կողմից ստանձնած գուտ պարտավորությունների կատարման համար:
- 3) Միջոցների համեմատման արդյունքում անհամապատասխանությունների բացահայտման կամ Շուկայի մասնակիցներից անհամապատասխանությունների վերաբերյալ ահազանգ ստանալու դեպքում Օպերատորը պարտավոր է մինչև վերջնահաշվարկի կատարման սահմանված ժամը ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները անհամապատասխանությունների պատճառները հայտնաբերելու և վերացնելու ուղղությամբ:
- 4) Միջոցների համեմատման արդյունքում անհամապատասխանություններ չհայտնաբերելուց կամ բացահայտված անհամապատասխանության վերացումից հետո Օպերատորը պատրաստում է վճարահաշվարկային փաստաթղթեր Օպերատորի առևտրային հաշիվներից Շուկայի մասնակիցների իրավասու հաշիվներին համապատասխան դրամային միջոցների և պետական արժեթղթերի փոխանցման նպատակով:
- 5) Շուկայի մասնակիցների սեփական և ամփոփ հաճախորդների իրավասու հաշիվներին վերջնահաշվարկի ժամանակ փոխանցման ենթակա դրամային միջոցների (պետական պարտատոմսերի) չափը որոշելիս Օպերատորը հաշվի է առնում՝
 - ա) նախնական դեպոնացման ժամանակ Օպերատորի դրամային (դեպո) առևտրային հաշվին Շուկայի տվյալ մասնակցի սեփական (ամփոփ հաճախորդների) իրավասու հաշիվներից փոխանցված դրամային միջոցները (պետական պարտատոմսերը),
 - բ) լրացուցիչ դեպոնացումների ժամանակ Օպերատորի դրամային (դեպո) առևտրային հաշվին Շուկայի տվյալ մասնակցի սեփական (ամփոփ հաճախորդների) իրավասու հաշիվներից փոխանցված դրամային միջոցները (պետական պարտատոմսերը),
 - գ) Շուկայի տվյալ մասնակցի կողմից սպառեպոնացված սեփական (ամփոփ հաճախորդների) դրամային միջոցները (պետական պարտատոմսերը),
 - դ) առևտրի ընթացքում կնքված գործարքների արդյունքում Շուկայի տվյալ մասնակցի (նրա ամփոփ հաճախորդների) մոտ դրամային միջոցների (պետական պարտատոմսերի) գծով առաջացած գուտ պահանջները,

- ե) առևտրի ընթացքում կնքված գործարքների արդյունքում Շուկայի տվյալ մասնակցի (նրա ամփոփ հաճախորդների) մոտ դրամային միջոցների (պետական պարտատոմսերի) գծով ծագած գուտ պարտավորությունները:
- 6) Սույն գլխի 4) կետին համապատասխան Հանձնարարականներում նշվող՝ Շուկայի մասնակիցների սեփական և ամփոփ հաճախորդների իրավասու հաշիվներին վերջնահաշվարկի ժամանակ փոխանցման ենթակա դրամային միջոցները (պետական պարտատոմսերը) պետք է հավասար լինեն սույն գլխի 5) կետի ա), բ), դ) ենթակետերում նշված միջոցների հանրագումարի և նույն կետի գ), ե) ենթակետերում նշված միջոցների հանրագումարի տարբերությանը:
- 7) Վճարահաշվարկային փաստաթղթերի պատրաստման ժամանակ դրամային միջոցների և պետական պարտատոմսերի համեմատման արդյունքում անհամապատասխանությունների բացահայտման կամ Շուկայի մասնակիցներից անհամապատասխանությունների վերաբերյալ ահագանգ ստանալու դեպքում Օպերատորը պարտավոր է մինչև վերջնահաշվարկի կատարման սահմանված ժամը ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները անհամապատասխանությունների պատճառները հայտնաբերելու և վերացնելու ուղղությամբ:

Գլուխ 7. Վերջնահաշվարկ

- 1) Վճարահաշվարկային փաստաթղթերի պատրաստումից, դրամային միջոցների և պետական պարտատոմսերի համեմատման արդյունքում անհամապատասխանություններ չհայտնաբերելուց կամ բացահայտված անհամապատասխանության վերացումից հետո Օպերատորը իրականացնում է հետևյալ գործողությունները՝
- ա) դրամային միջոցների վճարման հանձնարարական(ներ)ի ներկայացում Հաշվարկային բանկին,
- բ) պետական պարտատոմսերի փոխանցման դեպո հանձնարարական(ներ)ի ներկայացում Հաշվարկային բանկին:
- 2) Օպերատորը իր տարածքում գտնվող տերմինալից սույն գլխի 1) կետում նշված վճարման հանձնարարականները «ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի» ՀՏ 202 կամ ՀՏ 100 հաղորդագրության միջոցով, իսկ դեպո հանձնարարականները՝ «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկների էլեկտրոնային համակարգի» ՀՏ 522 հաղորդագրության միջոցով Հաշվարկային բանկ է ներկայացնում ոչ ուշ, քան ժամը 15:30-ը:
- 3) Հաշվարկային բանկում սույն գլխի 2) կետում նշված Հանձնարարականներն ավտոմատ եղանակով կատարվում են, որի արդյունքում իրականացվում են դրանցում նշված միջոցների փոխանցումները Հաշվարկային բանկում վարվող՝ Շուկայի մասնակիցների իրավասու հաշիվներին՝ միաժամանակ վերջիններիս փոխանցելով Հանձնարարականների կատարումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրությունները: Հաշվարկային գործակալի մոտ վարվող իրավասու հաշիվներին կատարվելիք փոխանցումների դեպքում Հաշվարկային բանկն ապահովում է Հանձնարարականում նշված միջոցների փոխանցումը Հաշվարկային գործակալի՝ Հաշվարկային բանկում վարվող թղթակցային դրամային կամ ամփոփ ներդրողների դեպո հաշիվներին՝ միաժամանակ Հաշվարկային գործակալին փոխանցելով Հանձնարարականի կատարումը հաստատող էլեկտրոնային հաղորդագրությունը: Հաշվարկային գործակալները Հաշվարկային բանկից ստացված հաստատումների հիման վրա ապահովում են միջոցների մուտքագրումն իրենց մոտ վարվող՝ Շուկայի մասնակիցների իրավասու հաշիվներին: Միջոցների մուտքագրման ժամկետները և Շուկայի մասնակիցներին տեղեկացման կարգը սահմանվում են Հաշվարկային գործակալի և Շուկայի մասնակցի միջև կնքված պայմանագրով: Հաշվարկային բանկը Հանձնարարականների կատարումը հաստատող հաղորդագրություններն էլեկտրոնային եղանակով առաքման անհնարինության դեպքում կամ «ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգին» և «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկների էլեկտրոնային համակարգին» չմիացած և իր մոտ իրավասու հաշիվներ ունեցող Շուկայի մասնակիցներին սույն կետում նշված՝ Հանձնարարականների կատարումը հաստատող փաստաթուղթը (տեղեկանք հաշվից) տրամադրում է թղթային եղանակով մինչև ժամը 16:00-ը:

- 4) Հաշվարկային բանկում իրավասու հաշիվներ ունեցող Շուկայի մասնակիցներն ստուգում են վերջնահաշվարկի արդյունքում իրենց իրավասու հաշիվների վրա փոխանցված պետական պարտատոմսերի և դրամային միջոցների համապատասխանությունը Օպերատորից ստացված գործարքների գրանցման վկայականների և առևտրային համակարգում արտացոլված տվյալների հետ: Հաշվարկային գործակալի մոտ իրավասու հաշիվներ ունեցող Շուկայի մասնակիցները Հաշվարկային գործակալի հետ ճշտում են վերջնահաշվարկի արդյունքում իրենց իրավասու հաշիվների վրա փոխանցված (փոխանցվելիք, հաշվեգրման ենթակա) պետական պարտատոմսերի և դրամային միջոցների համապատասխանությունը Օպերատորից ստացված գործարքների գրանցման վկայականների և առևտրային համակարգում արտացոլված տվյալների հետ:
- 5) Որևէ անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում Շուկայի մասնակիցները մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 16:30-ը այդ մասին հեռախոսով հայտնում են համապատասխան Հաշվարկային գործակալին, եթե այն իրավասու հաշիվները, որոնց վերաբերում է անհամապատասխանությունը, վարվում են Հաշվարկային գործակալի մոտ, Հաշվարկային բանկին և Օպերատորին: Հնարավորության դեպքում Հաշվարկային բանկին տեղեկացումն ուղարկվում է մաս էլեկտրոնային եղանակով՝ ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով: Միաժամանակ Օպերատորը անհամապատասխանություն հայտնաբերած Շուկայի մասնակցի հետ միասին ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցներն անհամապատասխանությունների պատճառները հայտնաբերելու և սույն կանոններով սահմանված կարգով վերացնելու ուղղությամբ՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով մաս Շուկայի այլ մասնակիցներին:
- 6) Եթե Օպերատորի կողմից կատարված ստուգումների արդյունքում պարզվում է, որ Շուկայի մասնակցի կողմից անհամապատասխանության վերաբերյալ արված ահազանգն անհիմն է, ապա Օպերատորը մինչև ժամը 17:00-ը այդ մասին հեռախոսով տեղեկացնում է Հաշվարկային բանկին և համապատասխան Հաշվարկային գործակալին, եթե այն իրավասու հաշիվները, որոնց վերաբերում էր ահազանգը, վարվում են Հաշվարկային գործակալի մոտ:
- 7) Եթե Օպերատորի կողմից կատարված ստուգումների արդյունքում պարզվում է, որ անհամապատասխանությունների վերաբերյալ ահազանգը հիմնավոր է կամ առկա է կանխաձեռն, որ այն կարող է լինել հիմնավոր, ապա Օպերատորը մինչև ժամը 17:00-ը հեռախոսով և ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով այդ մասին տեղեկացնում է համապատասխան Հաշվարկային գործակալին, եթե այն իրավասու հաշիվները, որոնց վերաբերում է (կարող է վերաբերվել) անհամապատասխանությունը, վարվում են Հաշվարկային գործակալի մոտ: Միաժամանակ Օպերատորը այդ մասին տեղեկացնում է Հաշվարկային բանկին՝ խնդրելով հետաձգել Հաշվարկային բանկի գործառնական օրվա փակումը և Շուկայի մասնակիցների հետ համաձայնեցված ձևով ապահովում է ուղղումների կատարումը սույն գլխի 8) և 9) կետերին համապատասխան:
- 8) Շուկայի այն մասնակիցները, որոնց իրավասու հաշիվները վարվում են Հաշվարկային բանկում և որոնց վերջնահաշվարկի ընթացքում սխալմամբ ավել պետական պարտատոմսեր կամ դրամային միջոցներ են փոխանցվել, պարտավոր են Օպերատորից սխալներն ուղղելու վերաբերյալ համապատասխան տեղեկացումը հեռախոսով և ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով ստանալուց հետո ոչ ուշ, քան 30 (երեսուն) րոպեի ընթացքում Օպերատորի դեպո և/կամ դրամային առևտրային հաշիվներին հետ փոխանցել ավել ստացված միջոցները: Շուկայի այն մասնակիցները, որոնց իրավասու հաշիվները վարվում են Հաշվարկային գործակալի մոտ և որոնց վերջնահաշվարկի ընթացքում սխալմամբ ավել պետական պարտատոմսեր կամ դրամային միջոցներ են փոխանցվել, պարտավոր են Օպերատորից սխալներն ուղղելու վերաբերյալ համապատասխան տեղեկացումը հեռախոսով և ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով ստանալուց հետո ոչ ուշ, քան 30 (երեսուն) րոպեի ընթացքում կարգադրել իրենց սպասարկող Հաշվարկային գործակալին Օպերատորի դեպո և/կամ դրամային առևտրային հաշիվներին հետ փոխանցել ավել ստացված միջոցները:
- 9) Օպերատորը ոչ ուշ, քան տվյալ առևտրային օրվա ժամը 19:00-ը, պարտավոր է համապատասխան Հանձնարարականներ ներկայացնել Հաշվարկային բանկ՝ սույն գլխի 8) կետին համապատասխան ստացված միջոցները Շուկայի այն մասնակիցներին փոխանցելու նպատակով, որոնց սխալմամբ քիչ միջոցներ էին փոխանցվել:

- 10) Եթե Շուկայի մասնակիցը սույն գլխի 8) կետում նշված ժամկետում չի կատարում նույն կետով սահմանված իր պարտավորությունը, ապա Օպերատորը սույն գլխի 11) կետով սահմանված կարգով իրացնում է գանձման իր իրավունքը:
- 11) Սույն գլխի 10) կետով սահմանված դեպքում Օպերատորը ոչ ուշ, քան տվյալ առևտրային օրվա ժամը 19:00-ը Հաշվարկային բանկ է ներկայացնում պահանջագրեր սույն կանոնների 2-րդ գլխի 5) կամ 6) կետի համաձայն Օպերատորին գանձման իրավունք տվող գրավոր համաձայնություններում նշված համապատասխան հաշիվներից սույն գլխի 8) կետում նշված միջոցների գանձման և Օպերատորի համապատասխան առևտրային հաշվին մուտքագրելու մասին՝ միաժամանակ Հաշվարկային բանկ համապատասխան Հանձնարարականներ ներկայացնելով նշված միջոցները Օպերատորի համապատասխան առևտրային հաշվից Շուկայի այն մասնակիցների իրավասու հաշիվներին փոխանցելու նպատակով, որոնց սխալմամբ քիչ միջոցներ էին փոխանցվել:
- 12) Սույն գլխի 8), 9) և 11) կետերին համապատասխան Շուկայի մասնակիցների, Հաշվարկային գործակալների և Օպերատորի կողմից համապատասխան Հանձնարարականները Հաշվարկային բանկ են ներկայացվում թղթային եղանակով:
- 13) Եթե Հաշվարկային բանկը տվյալ առևտրային օրվա մինչև ժամը 17:00-ը Օպերատորի կողմից չի նախագուշացվում իր գործառնական օրվա փակումը հետաձգելու վերաբերյալ, ապա Հաշվարկային բանկը զրոյացնում է Հաշվարկային բանկում վարվող այն Շուկայի մասնակիցների իրավասու հաշիվները, որոնք պարտադիր կարգով ենթակա են զրոյացման, և սահմանված ժամին իրականացնում է իր գործառնական օրվա փակումը:
- 14) Սույն գլխի 2) կետին համապատասխան Օպերատորի տարածքում գտնվող տերմինալից էլեկտրոնային եղանակով Հանձնարարականները ներկայացնելու անհնարինության դեպքում Օպերատորը հեռախոսով և ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով դիմում է Հաշվարկային բանկին՝ խնդրելով հետաձգել Հաշվարկային բանկի գործառնական օրվա փակումը: Միաժամանակ մինչև ժամը 16:00-ը էլեկտրոնային եղանակով Հանձնարարականները Օպերատորի կողմից ներկայացվում են Հաշվարկային բանկում Օպերատորին հատկացված պահուստային տերմինալից՝ այդ մասին ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով, հեռախոսով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնելով Շուկայի մասնակիցներին և նշելով պատճառը:
- 15) Պահուստային տերմինալից էլեկտրոնային եղանակով Հանձնարարականները ներկայացնելու անհնարինության դեպքում դրանք մինչև ժամը 16:30-ը Օպերատորի կողմից ներկայացվում են թղթային եղանակով՝ այդ մասին ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով, հեռախոսով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնելով Շուկայի մասնակիցներին և Հաշվարկային բանկին և նշելով պատճառը:
- 16) Սույն գլխի 14) կետով սահմանված դեպքում սույն գլխի 5), 6), 7), 9) և 11) կետերում սահմանված ժամկետները երկարաձգվում են 30 (երեսուն) րոպեով:
- 17) Սույն գլխի 15) կետով սահմանված դեպքում սույն գլխի 5), 6), 7), 9) և 11) կետերում սահմանված ժամկետները երկարաձգվում են մեկ ժամով:

Գլուխ 8. Պատասխանատվությունը

- 1) Օպերատորը ՀՀ օրենսդրությամբ, իր և Շուկայի մասնակիցների միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերում, կարգով և չափով պատասխանատվություն է կրում Շուկայում կնքված գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի հետ կապված իր պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
- 2) Սույն կանոններին համապատասխան Շուկայի մասնակիցների կողմից Օպերատորի առևտրային հաշիվներին փոխանցված պետական պարտատոմսերը և Հայաստանի Հանրապետության դրամը Օպերատորի կողմից կարող են օգտագործվել բացառապես Շուկայում կնքված գործարքների արդյունքում Շուկայի մասնակիցների կողմից ստանձնած պարտավորությունների կատարման համար:
- 3) Սույն կանոններով սահմանված պահանջների խախտման համար Շուկայի համապատասխան մասնակիցը պատասխանատվություն է կրում սույն կանոններով, ինչպես նաև Օպերատորի և Շուկայի տվյալ մասնակցի միջև կնքված պայմանագրով և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով:
- 4) Սույն կանոնների 7-րդ գլխի 8) կետի պահանջը չկատարելու դեպքում Շուկայի մասնակիցը պատասխանատու է դրա հետևանքով առաջացած իրական վնասների համար:

Գլուխ 9. Կանոններում փոփոխությունները և լրացումները

- 1) Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները դրա անբաժանելի մասն են և ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով:
- 2) Սույն կանոնները նոր խմբագրությամբ ուժի մեջ են մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելուց հետո՝ Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ սահմանված օրը՝ սույն կանոնների նոր խմբագրությամբ նախատեսված փոփոխությունների կիրարկումն ապահովող բոլոր փաստաթղթերի և պայմանագրերի ստորագրումից հետո:

Հաստատված է
«ՆԱՍԴԱԶ ՕԷՄԷՋՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ
ղիտորդ խորհրդի որոշմամբ

_____ Արմեն Մելիքյան

«16» նոյեմբերի 2009թ.
ք. Երևան
ՀՖԲ-01/023Լ